վայրերի մէջ, քաղաքից կէս ժամ հեռու, բոլոր յարմարութիւններով օժտուած, «վերելակաւոր եւ յարկարաժինաւոր», բացառիկ «գրաւչութիւններով եւ առաւելութիւններով» լեցուն — Automatic Otis Elevator, Frigidaire Electric Refrigeration, Brass Piping for Hot-Cold Water — տուն է երազում: Նկարի ներքնախորը դուք տեսնում էք բոցավառուած գործարաններ, եռուն գեռուն գործունէութիւն, բազմայարկանի տուներ, լեցուած բազմաղաւակ եւ աղմկալից բնակիչներով: Դուք այդ անուանում էք ներուժ կեանք, կառուցողական լինելիութիւն, արտադրական թափ՝ չոգենաւներ, չոգեկառքեր, սուլոցների ձայնը, ինքնաշարժների վազքը, տրակտորների գրղմբոցը: Բանուոր Պետօն հնոցը երեկոյեան լքում է, մեծ դարբասի մօտ ժամանակաչափի մեքենայի տոմսը առնում, մտնում է կօօպերատիւի գինետունը, մի երկու բաժակ օղի տնկում, զակուսկա անում ու ընկերների հետ կատակ անում ու փառք տալիս Մարքսին եւ Լենինին...

— Ինչո՞վ վատ երազ է:

— Երազները երբեք էլ վատ չեն, եւ հարցը դրանում չէ: Հարցը նրանում է, թէ ձեր մինակութեան մերկութիւնը ի՞նչպիսի պատմուճանով էլ ուզում ծածկել: Թզենու տերեւը մարդկային մարմնի կարեւորագոյն մասի վրայ: Ուզում էք ծածկել, որովհետեւ մերկ էք, որովհետեւ ներկան ձեր աչքերի առջեւ վիհ է, բովանդակութիւնից զուրկ, չոր մի տափաստան, որ պէտք է հերկել եւ ջրել, մեռելային եւ պարապ մի աշխարհ, որը լարուած գնդերի հարուածների տակ, արիւնի, քրտնքի եւ ոսկրի ուժով պիտի կենդանանայ: Brass Piping for Hot-Cold Water: Եւ յանուն այդ իդէալի ուրանում էք անցեալը եւ ուրանում էք ներկան, որովհետեւ ձեզ ներշնչող ոչ մի հոգեկան իրականութիւն չէք տեսնում:

— Ինձ համար գոյութիւն ունի միայն այն, ինչ որ երեւում է, ինչ որ աչքերս տեսնում են եւ ձեռքերս շօշափում են:

— Այո՛, հասկանում եմ, բայց պէտք չէ շփոթել իրականը տեսանելիի հետ: Ահա խորտաղէմ, աղքատիկ եւ մինակեաց մեր երկիրը: Ձեր աչքերը հողերի դիակի վրայ են սաւառնում եւ ոչինչ չեն տեսնում, իսկ ես, կեանքիս ոչ մի պահին, այդքան կենդանութիւն չեմ ըղձացած: Երբ նաւի վրայ էինք՝ վախենում էի: Ու՞ր ենք եկել, ի՞նչ է այս պարապը եւ ի՞նչ է ուզում ինձանից կմախքացած այս լուսան... Յիշո՞ւմ էք Պասկալը եւ իր «անծայր տարածութիւնների մշտնջենական լռութիւնը», որի առջեւ նա սարսափում էր: Պասկալը սարսափում էր — հիմա այդ ես լաւ եմ ըմբռնում — որովհետեւ կորցրել էր կենդանի կապը իրականութեան հետ: Նա ապրում էր պարապի մէջ եւ ուզում էր այդ պարապը յաղթել իր տրամաբանական եւ թուաբանական հանճարով: Վերջ ի վերջոյ նա եւս ձեզ նման նիւթապաշտ էր: Երկար տարիներ ես նրան համարում էի լատին մտայնութիւնից վեր միակ տուայտող եւ երաժշտական հոգին: Իրականի մէջ այդպէս չէ, Պասկալը, մտածում եմ այսօր, մի խաղամոլ է, որը վախում է պարտուելուց: Միակ բանը, որ նա խորապէս զգում է, դա պարապն է, ու իր մինակութեան մերկութիւնը նա եւս ուզում է ծածկել հաւանականութեան օրէնքով: Յիշո՞ւմ էք, — Աստուած չկա՛յ... Իսկ ե՞թէ կայ... Ու Պասկալը մտնում է Մոնտեկառլօ, նստում է կանանչ սեղանի առջեւ եւ խաղում է: Հարիւր հարուածի մէջ մէկը անպատճառ պիտի շահի, ուստի մէկ հաւանականութիւն կայ, որ Աստուած գոյութիւն ունի: Եթէ կայ մէկ հաւանականութիւն, ուրեմն աւելի լաւ է, աւելի օգտակար է հաւատալ. ինչո՞ւ ի զուր տեղը վտանգի ենթարկենք մեր ապագան... Անհրաժեշտ է չտրամաբանել: Պէտք է ապուշանալ — abetissez vous: Աստուա՞ծ — faites vos jeux, Messieurs... Եւ վերջ ի վերջոյ Պասկալի թուաբանական Աստուածը տարօրինակ կերպով նմանում է ձեր «վերելակաւոր եւ յարկարաժնաւոր» երազին: Կեանքի նոյնանման, հաշուաբանական եւ պարտադրական լուծում: Ծրագրը իրականութիւնից դուրս եւ ոչ ներսը:

Արդ, նայեցէք, մթնշաղի այս պահին, երբ երեւութապէս ամէն ինչ անհետանալու վրայ է, երբ գիշերը ձեռքը երկարում է դէպի լեռների ձիւնը, ու մեր քայլերը կպչում են պարապին — հայ մեր այդ երկիրը ճառագայթում է: Նրա ներքին բոցավառուած կրակը

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան